ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

27 փետրվարի 2018թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. *2017-18թթ. ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *Ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացի քննարկում՝ակադեմիական ազնվության ապահովում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
4. *ՈՒսումնագիտական գործընթացի իրականացում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
5. *2017-18 ուսումնական տարվա II կիսամյակի ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցի հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2017-18ուսումնական տարվա I կիսայակի I և II լուծարքային շրջանի առաջադիմությունը, ըստ որի ,,Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, մասնագիտության III կուրսի

երեք ուսանողներ ,,Ֆունկցիոնալ անալիզ,, առարկայից ունեն կրեդիտի պարտք, իսկ մեկ ուսանող հեռացվել է քննաշրջանին և լուծարքային շրջանին չմասնակցելու համար: Մնացած կուրսերում ակադեմիական պարտք չի գրանցվել:

Այնուհետև օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցող Մ. Ա. Զաքարյանը խոսեց ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի մասին:

Ավարտական և կուրսային աշխատանքների կատարումը ընթացքի մեջ են ուսանող և ղեկավար հանդիպումները իրականացվում է ըստ ժամանակացույցի:

Խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց օրակարգի երրորդ հարցը՝ կապված դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացում ակադեմիական ազնվության հետ: Նա նշեց, որ ֆակուլտետում իրականացվում են գնահատման գործընթացում ակադեմիական ազնվության ապահովում, ըստ որի բոլոր քննությունների ժամանակ կազմվում են մասնագիտական խմբեր, որոնք ներկա են լինում քննություններին, որով գնահատման գործընթացում ապահովվում է ակադեմիական ազնվությունը:

Օրակարգի չորրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ուսումնագիտական գործընթացի իրականացոման մասի, որի համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 2017թ. դեկտեմբերի 25-ի N 1514-Ա/2 հրամանի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման նպատակով հայտարարված է գիտական թեմաների մրցույթ: ,,Որոշ օպերատորներ և օպերատորային հանրահաշիվներ,, գիտական թեմայով հայտ են ներկայացրել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի դասախոսների հետևյալ կազմը.

1. Հովսեփյան Կարեն Հայկի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, խմբի ղեկավար
2. Զաքարյան Մանվել Աշոտի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան

3. Ցուցույան Արտակ Վոլոդյայի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ

4. Մելիքյան Մելինե Կառլենի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դասախոս

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Երաշխավորել ,,Որոշ օպերատորներ և օպերատորային հանրահաշիվներ,, գիտական թեման ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե՝ մրցույթին մասնակցելու:

Այնուհետև նիստի մասանկիցները անցան օրակարգի վերջին հարցին, զեկուցողը ներկայացրեց 2017-18ուստարվա II կիսամյակի ավարտական կուրսերի քննաշրջանի, ոչ ավարտական կուրսերի I ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Քննարկումից հետո արտահայտվեցին, որ գրաֆիկը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2017-18ուստարվա II կիսամյակի ավարտական կուրսերի քննաշրջանի, ոչ ավարտական կուրսերի I ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը:

ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ